# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք,
գ. Լեռնապատ, 27 փողոց. 7/6 , Հեռ. հեռախոս
/032268781/ , Lernapat.Lori@mta.gov.am

N 245
*16 նոյեմբեր 2017թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն մարզպետ.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33 հոդվածի 9-րդ կետով՝ Ձեզ ենք ներկայացնում Լեռնապատ համայնքի ղեկավարի N34-Ա, N35-Ա որոշումները:

17/11/2017

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Հ. Վարդանյան*
*032268781*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34-Ա

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ <<ՄԱՐԱԹՈՆ-ԴՐԱՄԱՀԱՎԱՔ 2017>> ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետով, 38 հոդվածի 7 կետով և հիմք ընդունելով 25.09.2017թ.-ի Լոռու մարզպետի գրությունը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄԵՄ՝

Փոխանցել << Հայաստան>> համահայկական հիմնադրամի 2017թ. մարաթոնին <<ԱՀ-ում խորքային հորերի հորատում, նոր ոռոգման ցանցի կառուցում և Արեգակնային էներգիայի համակարգի ներդրում>> ծրագրի իրականացման համար՝ ՀԿԲ h/h 103003215672, ՀՎՀՀ՝ 025074456 20000/քսան հազ/ դրամ, համայնքի բյուջեի 08/4/2-ի հոդված 4819-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ

2017 թ. նոյեմբերի 03
գ.Լեռնապատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռ. (0322)6-87-81, Lernapat.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
15 նոյեմբերի 2017 թվականի թիվ 35-Ա

# ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԿԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 21.07.2005թ.-ի N 1266-Ն որոշման 7-րդ հավելվածը, 14.03.1997թ. N 51-Ն որոշման 5-րդ հավելվածը, «Մել և Միլ» ՍՊԸ-ի կողմից կատարված տեղանքի չափագրումը՝ հողամասի հատակագիծը և շինությունների բնութագիրը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2016թ.-ին Լեռնապատ համայնքում պետական ծրագրի շրջանակներում կառուցվել է մանկապարտեզի տիպային շենք և գործում է սահմանված կարգով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24 կետերով և ՀՀ կառավարության 02.02.2002թ.-ի N 88-Ն որոշմամբ հաստատված կարգով, 29.12.2005թ. N 2387-Ն որոշման 48 կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնապատ համայնքի 06-041-0141-0029 ծածկագրով հասարակական կառուցապատման հողամասում գտնվող մանկապարտեզի գործառնական նշանակությունը փոխադրել հանդիսությունների սրահի՝ համաձայն հաստատված հատակագծի:
2. Լեռնապատ համայնքի 06-041-0141-0029 ծածկագրով 0,07895 հա հասարակական կառուցապատման հողամասը և հողամասում գտնվող հանդիսությունների սրահը, և պահոցները համաձայն հատակագծի ճանաչել համայնքային սեփականություն:
3. Հանդիսությունների սրահի և նրան կից օժանդակ շինությունների ընդհանուր հաշվեկշռային արժեքը կազմում է 5 449 895(հինգ միլիոն չորս հարյուր քառասունինը հազար ութ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ (հիմքը՝ Լեռնապատ համայնքի հիմնական միջոցների գիրք):
4. Հողամասը և շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չեն առաջացնում սերվիտուտ:
5. Հանդիսությունների սրահին տրամադրել փոստային հասցե՝ Լեռնապատ համայնք 4 փողոց 2:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համայնքի ղեկավար՝ Ս. Աբազյան

2017թ. նոյեմբերի 15
գ. Լեռնապատ